Արձանագրություն N 4
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.05.2020թ.
Ժամը՝ 12:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Գրիգորյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գրության քննարկման մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 21.05.2020 թվականին «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն իր 20.05.2020 թվականի թիվ 3651-20 գրության տեղեկացրել է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված որակավորման ապահովման բանկային երաշխիքը չի թողարկվել բանկի կողմից:

1.2 Հաշվի առնելով, որ մինչև պայմանագրի կնքելը պարզվել է, որ մասնակիցը ներկայացրել է բանկի կողմից չթողարկված բանկային երաշխիքներ՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը՝ մասնակցի հետ պայմանագիր չկնքել:

1.3 Հաշվի առնելով, որ 4-րդ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային արժեքը՝ ընտրված մասնակցին որոշելու նպատակով մասնակցի հետ կանցկացվի գների նվազեցման բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

1.4 Ելնելով երկրում առկա արտակարգ դրության պայմաններից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց առաջարկել մասնակցին իր կողմից ներկայացվող նոր /նվազեցված/ գնային առաջարկը ներկայացնել էլեկտրոնային փոստի միջոցով /ani.hambardzumyan@yerevan.am/ մինչև 2020 թվականի մայիսի 26-ը ժամը 11:00-ն և որը պարտադիր պետք է հաստատված լինի էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան
Անդամներ՝ ---------- Ռ. Գրիգորյան
---------- Ա. Սարգսյան
---------- Կ. Հարությունյան
---------- Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան